

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԻՍՐԱՆԻՅ ԿՊՐՍՎԱՆՈՒՅ ԱՐՄԱՇՈՒ

ՏԱՐԻ 45

ԹԻՐ 6

6 ՅՈՒԼԻՍ 1896

ՊՍԵՄՍՆԵ ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարեկան	40 Ղուրուշ
Վեցամսեայ	20 „
Թղթատարուն եան ծախք տարեկան	10 „

Հատով ՄԻԿ Ղուրուշ

Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ԱՐՄԻՆԵԼԻ Լրագրոյ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԴՍՀԱՆՍՅԱՅՈՒՆՆԵՐԸ	Մ. Ե. Օ.
ԱՒԵՏԱՐԱՆԻ «ՓՈՐՐԻԿ»Ը	ՄՈՒՇԵԼ Վ.
Ս. ԹԱԴԷՈՍ ԱՌԱՐԵՍԻ	ԶԱԷՆ Վ.
ԴԻՏԱԿՅՈՒԹԻՒՆ ՀՍԻՍՏԵՐ ՄԻՋ	ԲԱԲԳԷՆ Վ.
ՕՐԻՆԱՅ ԳՍՀԳԱՆՈՒԹԻՒՆԸ	ԽՈՍՐՈՎ Վ.
ՍՐԲԱՎԱՅՐԻՆ ԳՍՏԱՌԱՆԵՐԸ	ՄԱՇԹՈՅ Վ.
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԴԱՂԱՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ	

Բաժանորդացի ունենաց, ծանուցմանց եւ այլ մանրա-
մասնուած եւ այլ համար դիմել առ

Տեղում ունեւոր ՍՐԵԻՆԵՔ Լրագրոյ
Հասցիա, Նորաւանդակեան — Խառն

Նիկոմիդիոյ գործակալն է Մինաս Էփէնտի Աշեան,
որ միանգամայն չարափառաց գործակալն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՔ

Թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ՛ գաւառաց համար բաժա-
նորդագլինք կանխիկ կը վճարուին:

Բաժանորդագլուծ իւր կ'սկսին իւրաքանչիւր ամսոյ
1 ին կամ 15 ին:

ՄԱՍԻՍ

ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԽԵ. ՏԱՐԻ

ԵՅՈՒՆԻՍ 1896

ԹԻԻ 6

ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒՆԵՐԸ



Խնդիր մը՝ որուն երբ սկսած լինելը թերեւս փընտռելով գտնենք , բայց վերջը տեսնելու յոյս չունինք : Հետեւաբար մեր գրեին ալ խնդիրը լուծելու ակնկալութեամբ չէ , այլ ամենուն բան մը ըսած ատենը , բան մ'ալ մեր ըսած ըլլալու համար :

Քահանայացուներու խնդիրը քահանայութեան վիճակին հետ կապուած է : Եթէ արժանաւոր քահանայացուներ ըլլան , կ'ըսեն , քահանայութեան դիրքն ալ կը բարձրանայ , և նոյնչափ համոզմամբ կ'աւելցնեն . եթէ քահանայութեան դիրքը բարձրանայ , արժանաւոր քահանայացուներ ալ կը դառնան : Տեսակ մը պառտնէրուն անրոյժ խնդիրը . — Հաւը հաւկիթէն , չէնէ հաւկիթը հաւէն :

Ըստ մեղ քահանայացու պատրաստելը իւր մէջ ներ-
քին դժուարութեան կը հանդիպի :

Ամեն տեսակ պաշտօնի կամ կոչման կամ արուեստի
կամ արհեստի պատրաստողները կը յաջողին , որով-
հետեւ պատրաստութիւնը և դարձադրութիւնը իրարու
հետ կցուած և կապուած են : Մէկը բժշկութեան կը
պատրաստուի և բժիշկ կ'ըլլայ , վասն զի ուսման վերջը
վկայականը կ'առնէ և ահա բժիշկ է :

Զինուորական վարժարանէն ելնող աշակերտը սպայ
է . երկաթագործին խանութէն ելնող աշակերտը երկա-
թագործ է : Վարդապետութեան հետեւող անձն ալ վան-
քէն կամ դպրեվանքէն կամ կղերանոցէն ձեռնադրուած
վարդապետ կ'ընէ : Օրինակները այնչափ կրնանք շառ-
ցնել որչափ որ աշխարհի մէջ դբաղանք կայ :

Քահանայացուն այս կերպ չէ :

* * *

Բանանք քահանայութեան ուսումնարան մը . աշա-
կերաներ առնենք , կրթենք , տրվեցնենք , ընթացա-
ւարտ հանենք : — Կրնա՞նք քահանայ ընել . Ոչ :

Պէտք է որ ընթացավարտութեան և քահանայու-
թեան մէջ , ժամանակ մը անցնի , յորում քահանայու-
թեան պատրաստուած անձը ուսումնարանէն ելնէ , ա-
մուսնանայ , տուն տեղ կաղմէ , և այդ միջոցին համար
դէրք մը չինէ . ինքն ապրելու և տունը ապրեցնելու մի-
ջոց ճարէ , միով բանիւ այն նպատակը , որուն պատրաս-
տուած էր , բոլորովին մոռնայ , և նորանոր դժուարու-
թեանց ներքեւ մտնէ . և ուղէ չուղէ իրեն համար կա-
ցութիւն մը կաղմէ :

Անկէ ետքը քահանայ լինելու համար , իւր նոր վի-
ճակը պիտի քննէ , իւր ընտանիքը , նոր ծնած իղձերը ,
նոր դադափառները , ժողովրդեան մէջ ստացած համակ-
րութիւնը . և սուսջին յարմարութիւնը մոռնալով , նոր
յարմարութիւնները պիտի նայի :

եթէ այդ միջոցին առաջուրնէ տուայած և նոր դատած դիւրութիւններով, լաւ դերք մըն ալ կապմեց, քահանայութիւնը կը մոռնայ. երբեմն ալ ընտանեկան պարագայներ արգելք կ'ըլլան, երբեմն ալ թաղական հակադիւրութիւններ ծագած կ'ըլլան, և վերջապէս երբ քահանայացու կը վնասուի, առաջին պատրաստութիւնը այլ եւս ի նկատի չառնուիր:

* * *

Բայց աս կէսիս հնար է դիտել թէ ցարդ քահանայացուաց ուսումնարան չբացինք, որ փորձին ձախողիլն ալ տեսած ըլլանք: Սակայն պատրաստ և յարմար երիտասարդներ ալ միշտ ունեցանք, բայց երբեք անոնցմէ քահանայ չունեցանք: Այժմ ալ ուսուցչական դաստիարակը զարգացեալ և պատուաւոր անհատներ կը պարունակէ, որ ճշդիւ կը պատասխանեն և կը դերադանցեն իսկ ուսումնարանին պատրաստելիք քահանայացուները:

Հնար է արդեօք այդ ընտիր անհատներէն մէկը քահանայ ձեռնադրել: Փորձը կը ցուցնէ՝ որ երբ իրենց թաղին քահանայ պէտք կ'ըլլայ, իսկոյն լուսարար մը, փորժարանի կառավարիչ մը, և կամ հասարակ արհեստաւոր մը կ'ընտրեն որ քահանայ ձեռնադրուի:

Ուրեմն տխուր, բայց և իրական ճշմարտութիւնը խոտոտվանքը, թէ արժանաւոր քահանայացուներ կան, բայց քահանայ չեն ըլլար. և եթէ ուրիշ արժանաւորներ ալ պատրաստենք, անոնք ալ քահանայ պիտի չըլլան, եթէ պատրաստութիւնը և գործադրութիւնը իրարմէ զատող միջոցին մէջ լաւ կացութեան մը տէր ըլլան: Իսկ եթէ այդպիսի կացութիւն չկազմելնուն համար քահանայանան, նորէն կարող և արժանաւոր քահանայացուներ ունեցած պիտի չըլլանք:

Աւելի բացը խօսելով, կը հետեւցնենք թէ լաւ քահանայացուներու համար ուսումնարան մը արդիւնք պի-

տի չունենայ , քանի որ պատրաստութիւնը աւարտածին
պէս քահանայ ձեռնադրելու օրինական եղանակ չկայ :

* * *

Քահանայութեան նկատմամբ ուրիշ հիմնական պայ-
ման մըն ալ կայ : Քահանայն տեղական է , արժանաւո-
րութիւնն ալ տեղւոյն հետ : Համեմատական : Ա . Պոլսոյ
Բերայն կը տարբերի Թորքումի Վերրին-գիւղէն , և Քա-
տըքօյը Սպերի Ձկնաձուրէն , քահանայացուներն ալ պի-
տի տարբերին նոյն համեմատութեամբ , և հարկաւ այն-
պիտի անձեր պիտի ընտրուին որ կարենան այն տեղեր
մնալ և ապրիլ : Կոստանդնուպոլսեցի վարդապետ մը
դուրսեր առաջնորդ կրնայ երթալ . Կոստանդնուպոլսոյ
քահանայներէն մին գաւառներ չփոխադրուիր :

Հետեւաբար երբ գաւառացի անուռ քահանայ մը կը
տեսնեմք , իսկոյն չանարգենք . անիկա իւր ընտան և
իւր գիւղին համար տեղի օգտակար է , քան թէ որ և է
զարդացեալ քահանայ մը :

* * *

Քահանայացուաց հեռուոր պատրաստութեան ան-
տեղութիւնը , և քահանայացուաց համեմատական ընտ-
րութեան սկզբունքը ի նկատի առնելով , իբրեւ գործնա-
կան եղանակ մը կ'առաջարկենք քահանայացուաց մեր-
ձաւոր պատրաստութիւնը :

Թողունք որ՝ որ և իցէ տեսութեամբ կամ նպատա-
կով կամ՝ յարմարութեամբ ժողովուրդը իւր քահանա-
յացուն ընտրէ : Ժողովուրդը միշտ նախադասած է բարի
տիրացուն գիտուն անհատին , այս ալ իւր խղճին գազա-
նիքն է :

Եպիսկոպոսներն ալ արժանաւորը ձեռնադրելու
սկզբունքին հետ , հնազանդած են ժողովուրդին կամ-
քին և ընծայելոյն բաղձանքին : Ձեռնադրութիւնը կը
կատարուի միշտ ըստ վեց-մեան անցն իւր և ամենայն ժողո-

ՀԵՐԵԷՆ՝, և ոչ երբէք ըստ ընտրութեան և ըստ ազատ
որոշման ձեռնադրողին :

Մեծ անտեղութիւնը առկէ ետքն է : Ժողովուրդը
հապճեպ ձեռնադրութիւններ կ'ուղէ . քահանայն մեռեր
է , քահանայ չկայ , մկրտող չկայ , թաղող չկայ , աճա-
պարեւու է . — Այսօր կ'ընտրեն , վաղը կը կոչեն , միւս
օր կը ձեռնադրեն . քառասունքին մէջ ծովի նեղութեամբ
ի՞նչ կ'ընայ ընել . և ահա առաջին պատարապը կը մա-
տուցանէ և կը կարծուի կտտարեալ քահանայ մը , յան-
կարծական ոտուամալ պատրաստուած :

Այս կէտին վրայ բոլոր ուշադրութիւն կը հրաւի-
րենք :

Քահանային ընտրութիւնը վերջին վայրկենին չի
թողուի .

Ընտրեալ քահանայացուն անմիջապէս ձեռնադրուի .

Կամ թէ ձեռնադրուածը անմիջապէս պաշտօնի գը-
լուխ չանցնի :

Այլ միջոց մը — տարի մը , կամ պակաս , կամ ա-
ւելի — նկատելով ընտրեալ քահանայացուն կարողու-
թիւնը , քահանայութեան տեղւոյն կարեւորութիւնը , և
տկնկալեալ գործունէութեան ընդարձակութիւնը , ըն-
ծացացուն կամ նորընծայն եկեղեցական և անհրաժեշտ
ուսմանց հետեւի , գտնէ կանոնաւոր կերպով կրօնադի-
տութիւն ուսանի , Աւետարանն ուսումնասիրէ , տառուա-
ծաշունչ կարդայ , ծիպարաններուն ընտելանայ , կանո-
նաւոր թղթակցութեան և տեղեկագրութեան վարժուի ,
պատմութեանց ճաշակն սունու , թեթեւ հաշիւներ սոր-
վի , իսկ եթէ յարմարութիւն և պէտք ունի , աւելին ալ
ընէ . և մէկ խօսքով ատօմճանին պատիւը կարենայ պա-
հել իրեն հովուելիք ժողովուրդին մէջ :

Այսչափը անհնար չէ . և քահանայացուն կարող է
Ժամանակ մը կամ իւր միջոցներով կամ ազգականաց և
կամ թաղեցոց օգնութեամբ իւր ընտանեաց պահպա-
նութիւնն ալ ապահովել : Մեզմէ 40—50 տարի յառաջ
սովորութիւն էր որ ամուսնաւոր քահանայներն ալ տարի

մը կամ երկու՝ պարզ ստրկաւագութեամբ կը մնային, և այս միջոցին եկեղեցականութեան և կրօնական ուսմանց կը հետեւէին: Մենք առանց նոր եղանակ մը պատրաստելու, ինչ ինչ օգտակար սովորութիւններ ալ խափանեցինք:

* * *

Մերձաւոր պատրաստութիւնը կ'առաջարկենք, իբրեւ գիւրաւ գործադրելի եղանակ մը: Պատրիարքարան և առաջնորդարաններ կարող են զայն ստիպողական ընել, կամ հրամանով կամ սովորութեամբ: Քաղաքի եկեղեցիներու և վանքերու մէջ շատ գիւրին է այդ բանը իրագործել: Դպրեւանուց մէջ քանի մը նախափորձեր ալ ունեցանք, որք յաջողութեամբ պատկուեցան: Կամ պարզապէս ձեռնադրութեան եկողները՝ ամիսներով պահեցինք, կամ պատրաստութեան եկողներ վարժեցուցինք և ձեռնադրեցինք, և ամենքն ալ զգալի կերպով օգտուեցան:

Իսկ քանիներ հեռաւոր պատրաստութեամբ, 3—4 տարի ուսմունքէ ետքը իբր քահանայացու մեկնեցան, և գեռ և ոչ մէկը քահանայացաւ, և չեմք ալ գիտեր թէ յաջողին քահանայ ըլլալ:

Դպրեւանուցս ծրագիրն կազմուած է բովանդակ եկեղեցականութեան համար, բայց քահանայացուներու պատրաստութեան համար եղած փորձերը և կարգադրութիւնները, գեռ արդիւնք չունեցան:

Ինչ որ գրեցինք փորձառութեան վրայ հիմնուած է: Մերձաւոր պատրաստութեան կերպը մեզի աւելի օգտակար կ'երևի: Կը փափաքեմք զայն ընդարձակել, և Պատրիարքարանի հրամանով հաստատել, որ քահանայացուք կանուխ ընտրուին, և ձեռնադրութենէ առաջ և յետոյ դոնէ տարի մը եկեղեցականութեան կարեւոր ուսմանց պարապին: Թո՛ղ Դպրեւանքէն ալ պահանջուի այդ նպատակին աշխատիլ իւր միջոցներուն բաւականութեան չափ:

Մ. Ս. Օ.

ԱՌԵՏԱՐԱՆԻ “ՓՈՔՐԻԿ” Ը

(ՃՆՇՈՒ ԱՌԵՏԱՐԱՆ ՄԱՏԺ. ԺԸ. 10—14)

Բարոյականի ամենէն գերազանց դործն , ամենէն գովե-
լի արտայայտութիւնն համարուած է անկէալիերոս պաշտպա-
նութիւնը :

Երբ կ'կարգանք թէ անքաղաքակիրթ ազգաց մէջ կ'լիները ,
ծերերը ու տկար մանուկները կ'անարգուին՝ կ'արտաքսուին
կամ կ'սպաննուին , թէ հրէայք իրենց բորոտները և լուսնա-
ները՝ փոխանակ բուժելու՝ քաղաքներէ հեռու կը վանէին և
աղբիւսներ ու գերեզմանատուներ կ'լինէին ասոնց ապաստա-
նարանը , և երբ այժմ ալ կ'տեսնենք թէ թշուառ մանուկներ
կան՝ որք որք և ընկեցիկ կ'մնան , թշուառ կ'լինեն կան՝ որք
կ'լքուին , թշուառ դատակարգեր կան՝ որք կտառապին , կա-
րեկցութեան և զթոյ հառաչանք մը կ'արձակենք . ձգտում
մը կ'ունենանք դարման մը խորհելու , օգնութեան ձեռք կար-
կառելու :

Ո՞վ ներշնչեց այդ ազնիւ զգացումը մեր մէջ . ո՞վ սով-
րեցուց թէ այդ անհատնում թշուառները՝ նոյնքան իրաւունք
ունին ապրելու որքան մենք , նոյնքան երջանիկ լինելու՝ որ-
քան մենք . —

«Զգոյշ լերս—տ ձե՛ տըհամարհեցէ՛ք զմի ի փսրէանցս յայս-
ցանէ » .

Ահա այդ բարոյական ազնիւ արտայայտութեան գերազոյն
սկզբունքը , զոր յղացած է Քրիստոս :

Փոքրիկները՝ Քրիստոսի և իւր Աւետարանի բարեկամներն
են , ամենէն խոնարհ արարածները , ամենէն թշուառ և մե-
ղաւոր համարուած մարդիկը՝ ընկերութեան մէջ :

— Զգուշացէ՛ք , կ'ըսէ Յիսուս , արհամարհելէ դանոնք , և
մի՛ կարծէք թէ անոնք արժանի չ'են ձեր խնամքին ու հոգա-
ծութեան . մի՛ կարծէք թէ անոնք՝ աշխարհիս մէջ լքուած՝
թշնամանուած՝ պաշտպանութիւն չ'պիտի գտնեն . Աստուած

պիտի պաշտպանէ զանոնք . նա զանոնք կ'սիրէ , կ'գուրգուրայ անոնց վրայ՝ երջանիկ՝ հարուստ և առողջ մարդոցմէ աւելի , նա՝ անոնց վրայ կ'հսկէ .

«Ասեմ չեղ , զե՛հրեգաւիշ նպաստ յերկինս՝ հանապապ պէտէն զերեսս հօր իմաց որ յերկինս է» .

Անոնց «պահապան հրեշտակներ»ը միշտ Աստուծոյ քով են , պատրաստ՝ ցուցնելու իրենց պաշտպանեալներուն հասած ամենախորքիկ վառնգը , անոնց օգնութեան հասնելու , ապահովցնելու և ամրացնելու Աստուծոյ պաշտպանութիւնը անոնց վրայ :

Այս «պահապան հրեշտակներ» տկարութիւնը ծնունդ տուած է՝ Եկեղեցւում՝ վարդապետութեան մը , բայտ որում ամէն քրիստոնեայ՝ ծնածին պէս՝ հրեշտակ մը կ'ունենայ երկնքում , հսկելու համար անոր վրայ՝ մինչեւ մահը : Բայտ հնոց աստղահմարական կարծեաց ալ ամէն մարդ «աստղ մի ունի երկնքում» : Աւետարանի մէջ յիշուածը՝ լոկ վիպութիւն մ'է ստորմտէն . «Բանակը հրեշտակաց Տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք և պահէ զնոսա» (Սղծ. ԼԳ. 8) : — Ինչ որ ալ ըլլայ , սիրուն է այս վարդապետութիւնը , թշուառներու տառապանաց աղաղակը՝ լքեալներու ողորմուկ ճիշդ , մեղաւորներու զղջական հառաչանքը՝ պահապան հրեշտակի թեւին վրայ՝ կ'սլանայ Աստուծոյն արդարադատ Աթոռին ոտքը , ինչպէս արիւնն Արեւի և Մարտիրոսաց՝ ու խունկը բուրմառի :

Այս բաւական չէր , Յիսուս աւելի յառաջ կ'երթայ .

Արհամարհելով թշուառներն ու լքեալները՝ ո՛չ միայն կը զայրացնէ մարդ «պահապան հրեշտակներ»ը այլ և մեծագոյն շարժում մը յառաջ կ'ընէ . «Որդի Մարդոց» աշխարհի վրայ կ'երեւի և պաշտպան կ'կանգնի անոնց . ինքը գերազոյն միջնորդ կ'լինի և՛ իր Հօր առջեւ՝ Աւետարանի փոքրիկներո՛ւ դասար կ'պաշտպանէ .

«Զի՛ էին Որդի Մարդոց կեցս-ցանել զկորստեալսն» :

Ուրեմն , քանի որ «Մարդոց Որդին» եկած է կորսուածները , թշուառները՝ անկեալները՝ լքեալները ապրեցնելու , պէտք է ամէն ոք զգուշանայ զպէսելու անոնց՝ արհամարհելու զանոնք , ապա թէ ո՛չ՝ արհամարհած կ'լինի Քրիստոսը և նորա աստուծային դործը :

Ինչպէս հիանալի է Քրիստոսի այս երկնային գութն ու գործը: Գութն ու գործ՝ զոր գործնականապէս աւ ցուցուց արդէն. իւր ըրած բժշկութիւնները չէ՞ն պատկերացներ միթէ իր անհուն զգացմունքը՝ հանդէպ մարդկային թշուառութեանց. ինչո՞ւ՝ երբ շնացող ժողովուրդ մը՝ քարերով կ'ուզէր ջնջել անկեալ կեանք մը, ինքն՝ իւր հոգւովն ու հմայքով՝ պաշտպան կ'իկանդնէր անոր և միակ սաստով մը կ'ցրուէր «չնացեալ կիւն»ը շրջապատող այդ կատաղի ամբոխը (Յովհ. Գլ. Ը). Քրիստոս չէ՞ր որ մաքսաւորներն՝ մեղաւորներն՝ Քանանացիներն՝ Սամարացիներն ու հեթանոսները, որք հրէից կրօնական մելեռանդ ու արտաքսիչ զգացմանց առջեւ՝ պիղծէին ու խորշելի, սիրով կ'ընդունէր, կ'ըժշկէր, կ'խրատէր, և իր Երկնային Արքայութեան կ'որդեգրէր:

Նա չէ՞ր որ տկար և անզօր մանուկներ իր գիրիը կ'առնուր, կ'համբուրէր և կ'օրհնէր, ու կ'ըզենէր զանոնք թէ՛ իրր տիպար և օրինակ Աւետարանի Փոքրիկներն և թէ՛ միանգամայն՝ իրր յարացոյց Երկնից Արքայութիւնը ժառանգողին:

Ինքը չէ՞ր որ՝ վերջապէս՝ անպաշտպան և թշուառ բորոտներն ու լուսնոտները կ'սրբէր և ընկերութեան հաղորդ կ'ընէր:

Այս ամէն օրինակներն են որ ազգեցին և սաեղծեցին քաղաքակրթութեան բարոյականն ալ՝ հաւասար արդարութեան և իրաւունքի սկզբունք իրր զօրավիզ տալով տկարներուն՝ թշուառներուն և անկեալներուն:

Դժբաղդարար անձնական շահն՝ կիրքն ու փառասիրութիւնը՝ շատ անգամ կ'մոռցնեն Քրիստոսի այս գերազանց սկզբունքն ու օրինակը, որ կ'մնայ լոկ յոյս մը՝ «Փոքրիկ»ին համար՝ ազադայ երջանկութեան, և բոլոր մը կ'լինի այն՝ «Քրիստոսեայ» անունը կրող շահախնդիր մեծերու և փարիսեցիական խմորով չաղախուած՝ Սատուկեցի «Աննա»ներու և «Կայլափայ»ներու դէմ, որք Քրիստոսը խաչելով՝ կ'արձեցին թէ անոր սկզբունքներն ալ կրնային թաղել:

Թո՛ղ յուսան միշտ այդ «Փոքրիկ»ները՝ Քրիստոսի ազահովիչ և մխիթարիչ խոստումներով:

«Ո՛ւ էն էտճ հօր էճոյ՝ որ յերէնն է՝ էլէ էրեցէ մէ է փոքրեանց յայսցանէ»:

Աստուած չ'ախտի ուղէ որ իրենցմէ և ո՛չ մին կորսուի

մշտապէս՝ անօգուտ տեղը . և եթէ փորձանք մը պատահի այդ «փոքրիկ»ին՝ ինքն Աստուած է՝ որ , թողլով իւր բոլոր հաւատացեալները , այդ միակ խեղճին ետեւէն պիտի երթայ , պիտի դռնէ զանի՝ և պիտի ուրախանայ իր ըրած այդ փրկութեան գործին վրայ .

Ինչպէս որ հարիւր ոչխար ունեցող մէկը՝ կ'ընտելնաւուն և իննը երեսի վրայ՝

«Եւ երբեք ինչպէս զհարեալն»

և երբ կ'դռնէ՝ «դնէ գնա ի վերայ ուսոց իւրոց խնդալով» «Ղուկ . ԺԵ . 5) և յատուկ կոչուեք կ'ընէ իւր այդ կորուստին բարեբաղլ գիււրը տօնելու համար :

* * *

Ահա Աւետարանի տուած քաղցրիկ միութարութիւնը . Աստուած իւր պաշտպանութեան տակ տուած է՝ «փոքրիկ»ներն ու «հոգիներն» . կ'հսկէ անոնցմէ իւրաքանչիւրին վրայ մասնաւորապէս : Վա՛յ անոր՝ որ կ'արհամարհէ Աւետարանի փոքրիկը . Լա՛ւ էր որ քար մը կապէր իր վիզէն և ծովը նետուէր՝ քան թէ պատճառ լինէր «փոքրիկ»ներէն միոյն կորստեան : Ատով Քրիստոս խղճի ազդեցութիւնն ալ կ'արթնցնէ , այո՛ , խի՛ղճ—այդ աստուածային նախաքննիչ գաւառորը , կարծես թէ կը լռէ ու կ'ողորանայ , երբ շահն ու խորախորհուրդ հաշիւներ իր պաշտօնը կ'խափանեն :

Գոնէ՛ անհատապէս՝ օրինակ առնունք Քրիստոսի այս վերկարար քարոզութենէն : Ամենքս ալ մեր «փոքրիկ»ները ունինք , որք զթութեան արժանի են , «փոքրիկ» անհատներ և «փոքրիկ»ներու ամբողջութիւն մը . ետեւէ ընկնինք փնտուելու զանոնք և ուսերնուս վրայ առնենք . այդ է կրօնից միակ և սրբազոյն արտայայտութիւնն ու գործն , առանց որոյ «հաւատքն մեռեալ է» . այդ է միակ նշանը քրիստոնէութեան , ազոր մէջ կ'ընդունաւորին ամէն դաւանանք և ամէն պաշտօն , ամէն օրէնք և մարդարեք անկէց կախումն ունին :

Իսկ դո՛ւք , թշուառ «փոքրիկ»ներ , միութարուեցէ՛ք և յուսացէ՛ք , Քրիստոս կուտայ ձեզ այդ յոյժ՝ ապագային համար , ձեր աստապանքները կ'տեսնէ Նա , և ազոնց փոխա-

րէնը պիտի տայ ձեզ . եթէ մարդիկ ձեզ կ'ըբեն՝ Աստուած է ձեր պաշտպանը . ինչպէս Քրիստոս ըսաւ .

«Ո՛ր էն էսմէ առաջէ Հօր իմոյ որ յերէն» է՝ եթէ կ'ըբենք թէ ՓՈՒՔԻԿԱՆՑՍ յայտարարէ:

ՄՈՒՇԵՂ, Վ.

Ս. ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ահաւասիկ անուն մը որ Հայ . եկեղեցւոյ ճակատը կ'զարդարէ անոր սկզբնաւորութենէն ի վեր ճանչցուելով իբրեւ առաջին քարոզն հայ քրիստոնէութեան եւ որ դժբաղտաբար պատմութեան մէջ յիշատակուած բազում մեծագոյն անձնաւորութիւններուն պէս շատ յստակ չ'ներկայանար մեր աչքին իւր կեանքի բոլոր զիծերովը, այլ տեղի կու տայ բազում տարակարծիք ենթադրութիւններու:

Ակնարկ մը նետելով հին պատմագրաց վրայ զարմանքով կը տեսնենք որ այս առաքելի մասին անոնց լռութիւնը զրեթէ ընդհանուր է: Մ. Խորենացիէն առաջ Բ. Փաւստոսն է միայն որ Թադէոս առաքելը հիմնադիրն կ'նկատէ մեր հայրապետական աթոռին եւ զայն «Թադէական» կ'անուանէ. միւս ամենուն համար հայ քրիստոնէութիւնը Մ. Լուսաւորչիէն սկիզբ կ'առնու , բան մը որ հակառակ է պատմութեան, վասնզի պատմական ճշմարտութիւն մ'է այսօր որ Ս. Գրիգոր Լուսաւորչի արդիւնքը հայ քրիստոնէութեան առաւել տարածումն ու վերջնական յաղթութիւնն է եղած քան թէ սկզբնաւորութիւնը, քանի որ իրմէ առաջ Հայ . եկեղեցին ունէր արդէն իւր եպիսկոպոսական աթոռն եւ իրմէ ոչ շատ տարիներ ետքը, 311ին, այնքան զօրացած կ'ըլլայ որ իւր կրօնքին համար դէմ կ'դնէ հռովմայեցիներու եւ զլսիկսը ետ կ'դարձնէ զանոնք:

Ուրեմն Փաւստոս եթէ նոյն իսկ պատմական զբաւոր աղբիւրէ մը առած չէ իւր այս տեղեկութիւնը, որպէս կ'կարծեն ոմանք անոր պատմութեան Ա. դար իսր անվաւեր նկատելով, տարակոյս չկայ որ հին եւ ընդհանուր աւանդութիւն մը ունի իւր առջեւ Թադէոսի առաքելութեան ստուգութիւնը վճռապէս աւանդելու չափ զօրաւոր: Թադէոսի անունը հինգ անգամ յիշուած է Բիւզանդի քով, միշտ Լուսաւորչին հետ միասին եւ զրեթէ միեւնոյն կերպով, այնպէս որ կրնայ իրաւամբ կասկածուիլ թէ յատուկ նպատակաւ մը օտար ձեռքով եղած յաւելումներ

ըլլան անոնք, սակայն երբ նկատի առնուենք պատմութեան ընթացքը, պիտի տեսնենք որ օտար չէ անոր մէջ այն զաղափարն թէ Հայ. եկեղեցին առաքեալի մը կ'պարտի իւր սկզբնաւորութիւնը. եւ զայս բացայայտ բառերով կ'գտնենք Դանիէլ արքեպիսկոպոսի մեծամեծներուն ուղղած կշտամբական ճառին մէջ ուր քաջայանդուզն Ասորին Հայ ազգը Հրէից նմանցնելով, որ իրենց փրկիչը ապերախտութեամբ սպաննեցին, կ'յաւելու. «Դուք իսկ նախ զձեր զբարոզն եւ զհրաւիրակն զառաքեալ առ ձեզ եկեալ սպանէք . . . եւ զհետ նորա նորին նմանին չարչարեցին (հարբն ձեր) վասն նոյն նորին իրաց» (Գ. ԺԳ):

Ուրեմն Լուսաւորչէն առաջ առաքեալ մը եկած եւ քարոզած է Հայոց ու անոնցմէ սպաննուած: Այս առաքեալն է աւասիկ որ Թադէոս կ'անուանէ եկեղեցւոյ հնազոյն աւանդութիւնը. վասնզի Բարեպետիքոս Առաքեալը երկրին հարաւային կողմերը միայն քարոզած ըլլալով միշտ երկրորդական լուսաւորիչ մը նկատուած է Թադէոսէն յետոյ: Թէեւ անուրանալի է որ Հայ. եկեղեցւոյ առաքելականութիւնը այդ երկու վէմերու վրայ միանգամայն հաստատուած է:

Այսու ամենայնիւ մեր եկեղեցւոյ այս նախկին Լուսաւորչին ո՞րն լինելու մասին կարծիքները կ'տարբերին մատենագիրներուն եւ բանասէրներուն քով: Ոմանք, իրենց գլուխն ունենալով Խորենացի պատմահայրը, կ'ուզեն զայն նոյն համարել եղեսպցիներու առաքեալին հետ. եւ հետեւաբար 72 աշակերտներէն մին:

Մեր քերթողահայրը Լաբուքնիայի հայերէն Թարգմանութիւնը ունենալով իւր աչքին առջեւ ամենայն միամտութեամբ հետեւած է անոր առանց ուշադրութիւն ընելու ասորի բնագրին որուն բոլորովին անհարազատ Թարգմանութիւնն է հայը, այն ատեն կենդանի եւ հաստատուն եղած հայկական աւանդութեան մը յարմարցնելու նպատակաւ, այնպէս որ ըստ ասորական աւանդութեան, զոր յառաջ կ'ըրէ ասորի բնագիրը, եղեսիոյ առաքեալը բոլորովին տարբեր է Հայոց առաքեալէն: Ասորոյ Թադէոսը իւր առաքելական գործը յաջողութեամբ եւ երկրին մեծամեծներուն օգնութեամբ ի գլուխ հանելէ յետոյ՝ բնական մահուամբ կ'վախճանի հոն եւ կ'ձաղուի եղեսիոյ արքայական դամբարանին մէջ, մինչդեռ Հայոց առաքեալը անյաջողութեան կ'մատնուի նոյնօրինակ մեծամեծներու պատճառաւ եւ կ'ձաղուի Արտազու դաշտին մէջ, ուր եւ կ'հանգչի մինչեւ ցայսօր:

Հայկական աւանդութեան այս խեղաթիւրումը Խորենացւոյ կամ Լաբուքնիայի հայ Թարգմանչին կողմանէ, իւր արձագանգն ունեցած է մեր բոլոր մատենագիրներուն քով առանց կորսնցնելու իւր բնիկ դրոշմը, այնպէս որ յետագայ զրեթէ բոլոր մատենագիրը եղեսիոյ առաքեալը մեր նախկին Լուսաւորչին հետ շփոթելով հանդերձ չեն հաւանիր զայն Յիսուսի Քրիստոսի աշակերտներէն մին համարելու Ասորիներուն պէս, այլ միշտ կ'պնդեն թէ Հայոց առաքեալը տասներկուքէն մին եղած է: Եւ զարմանալին այն է որ, ուզելով արդարացնել Խորենացիի եւ անոր հետեւողներուն կարծիքն եւս, 72 աշակերտներուն «գլուխ եւ վարդապետ» ըլլալ կ'աւանդեն զայն. (վանական վարդ. Յովհ. Երզնկացի ելն):

Մեր եկեղեցւոյ Լուսաւորիչ առաքեալն ուրեմն Աւետարանին յիշատակած Յուդա - Թադէոսն է, առաքեալներուն կրտսերը, Յակոբեան մականունեալը (Յակոբեան մականունը երբեք իրաւունք չտար զայն եղբայր Յակոբայ համարելու, որպէս կ'ընեն ոմանք): Սա Պէնտէկոստէից շնորհաբաշխութենէն ոչ շատ ժամանակ յետոյ Յերեւո հայաւնակ գաւառներէն անդ եկող հրէակրօն ուխտաւորաց հետ (ըստ Տերտուղիանոսի) ծամբորդելով կ'սկսի այդ երկրին զանազան կողմերը երկնից արքայութիւնը աւետարանելու: Ոչ շատ ժամանակ յետոյ ըսինք, որովհետեւ անոր նահատակութիւնը, որ սերտ կապ ունի Սանդուխտի մարտիրոսութեան՝ Հայ. եկեղեցւոյ կողմէ Քրիստոսի նուիրուած այդ առաջին շուշան - պահարարին մատուցումին հետ, կարելի չէ հեռացնել Սանատրուկի ժամանակէն (37—45), հազիւ Պէնտէկոստէէն տասնեակ տարիներ ետքը տեղի ունեցած ըլլալով:

Ապա ուրեմն, հակառակ վանական վարդապետի յառաջ բերած աւանդութեան թէ ի սկզբան դժկամակած է Թադէոս առաքեալ իւր այս առաքելական վիճակին բարեգութեան երթալու, առաքելելով թէ. «Երկիրն ցուրտ է եւ մարդիկն բրտաբարք» (բան հաւատալի. Յիս.), նա իւր անունին համեմատ համակ խանդ կտրած, առանց երբեք վաքանութի, Քրիստոսի յայտնութիւնը զոր չէր ուզեր իրեն եւ իւր ընկերակիցներուն միայն վերապահել (Յովհ. Ժ. 22) փութաց տարածելու այն երկրին մէջ որուն օգնութեան հրաւէր կ'կարգար դարեր առաջ երեմիա մարգարէն աստուածային վրէժը խնդրելու համար Բաբելոնէն (Ծն. 27) եւ որ մեծագոյն իրաւունքն ունէր անոր, վկայ եղած ըլլալով աստուածային յայտնութեան (Ծննդ.):

Սուրբն Թադէոս արդարեւ շուտով զոհ գնաց այդ բրտաբարք ազգին, բայց իրեն հետ տանելով հայ ամբիժ եւ մատղաշ կուսութեան առաջին ծաղիկը իբրեւ պսակ իւր յաղթական ճակատին:

ԶԱՒԱՆՆ Վ. Տ.

ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՔԻ ՄԷՋ

Հռովմայեցւոյ Թուղթը Պօղոսի այն գրուածներէն է, և ըստ ինքեան միակ գրուածը, ս'ըր Հիթանոսայ Առաքեալը կ'հայելիանայ իւր հաւատքի ըմբռնումովը: Նա՛ իւր բոլոր Թուղթերուն մէջ կ'իտօսի, ասուղիւ, իւր

անձին վրայ, կ'ըստցաւորէ իւր գաղափարները, կ'ըստրոգէ Աւետարանը, կ'յորդորէ, կ'խրախուսէ իւր հաստատած եկեղեցիները, բայց հո՞ս' Հռովմայեցւոյ Թուղթին մէջ է որ, երբ իւր շնչաւորը հաւատք կ'հնչեն, Պօղոսի բուն ներքին մարդը կ'արապայտուի. հաւատքով կ'խօսի քրիստոնէական հաւատքի մասին:

* * *

Առաքեալը կ'զրէր իւր Թուղթը՝ կանոն ժամանակէն Հռովմ գաղթած քրիստոնեայ հրեաներուն: Նա փորձով սատուեց որ Աւետարանը աւելի յաջող էր ոչ հրեայ ազգերու մէջ. այս տեսակէտով Հռովմը յետոյ շատ ընդարձակ և Աւետարանի մշակութեան գերազանցապէս յարմար տաղարէզ մը պիտ'ըլլար. բայց ամենէն յառաջ կ'ուզէր Յուստինական քաղաքին հրեաները պատրաստել՝ դիւրացնելու համար իւր ապագայ դործունէութիւնը և զանոնք ընտանեցնելու իւր վարդապետութեան:

Օրէնքը մեծ արգելք մըն էր Աւետարանի՝ արձակ համարձակ ծաւալումին. Հրեայք՝ հին ուխտի կրօնական գրութեամբ յաւակնեալ՝ կ'դժկամակէին նոր վարդապետութեան հանդէպ. ա՛յնպէս կ'կարծէին՝ իբր թէ փրկութեան համար բաւական ըլլար զԱստուած ճանչել, Անոր նախանձն ունենալ, Այս չէ՛ր սակայն վերկովմիւնը. և Պօղոս համակ դորով սրտով մը կ'աշխատի, կ'ազօթէ ա՛յդ յուսկնոտներու վերկովմեան համար. որովհետեւ անոնք կ'հաւատան Աստուծոյ՝ բայց առանց դիտութեան, իրենց հաւատքին վրայ գիտակցութիւն չունին, ազէտ են Աստուծոյ Արդարութեան և կ'ուզեն իրենց արդարութիւնը հաստատել անոր տեղ. իրենց օրէնքով կ'կառավարուին և չեն գիտեր որ օրէնքի վախճանը Քրիստոսն է՝ ամեն հաւատացեալի արդարութեան համար (Հռովմ. Ժ. 3—4):

Պօղոս ինքն ալ ապրած էր այս ագիտութեան մէջ՝ և դեռ մինչեւ Ստեփանոսի քարկոծումը իբր «եբրայեցի»

յիբրայեցւոյ, ըստ օրինացն վարիսեցիս կ'հալածէր Եկեղեցին, և ըստ արդարութեան օրինացն անարատ» կը մնար. բայց նա չուա հասկցաւ թէ սխալ էր իւր ըմբռնումը. համոզուեցաւ թէ իւր թշուառութիւնը, երբայեցիութիւնը, վարիսեցիութիւնը, նախանձայուղութիւնը եւն, մէկ բառով շահը (ինչպէս կ'ըսէ ինքն Պօղոս) զանազան փրկատուի համար. նա աւելի յառաջ գնաց և սկսաւ ամեն բան քննաւ համարել «մասն առաւել գիտութեանն Յիսուսի փրկատուի». ամեն բանէ զրկուեցայ, կ'ըսէ, որպէս զի փրկատուը չահիւմ և հաւատքով ճանչեմ զԱնի (Փիլպ. Գ.). — Պօղոս թօթափեց իւր հրէական ագիտութիւնը և դիտցաւ հաւատարմ. Ահա՛ թէ ինչո՞ւ հաւատքով կ'իստի քրիստոնէական հաւատքի վրայ և դիտեցէ՛ք թէ ինչո՞ւ Պօղոսի թուղթերը տարբեր յուզում մը կ'ընդեն քրիստոնէայ սրտերու մէջ և խօսմունք՝ մտայը մէջ: Անոր գորովը մեր գորովն է և ազօթքը՝ մեր ազօթքը: — Նա՛ ամբողջովին դիտակցութիւն է և մարմնացումը հաւատքին: Այնքան լաւ, այնքան խորին կերպով գիտէ իւր հաւատքին առարկան, որ կ'ուզէ ճշգրտ լինել ի փրկատուէ» իւր եղբարց համար ալ. այսինքն՝ եթէ հնար է ամեն բան զոհել անոնց համար, որպէս զի կարենան իրեն պէս ճանչել փրկատուը, իրեն պէս հաւատալ Անոր:

* * *

Պիտութիւն հաւատքի մէջ՝ կրօնական կեանքի միակ պայմանն է և հաւատացեալի կեանքին խորիսխը:

Մեր ամենէն նիւթական զբաղումներուն մէջ ալ՝ երբ կատարեալ հասկացողութիւն չունինք, երբ մեր շարժումները առանց հիմի և առանց նպատակի կ'գործադրուին, շատ խեղճ վիճակի մը մէջ կ'գտնուինք: Կեանքն ու կենցաղ իրենց պայմաններն ունին. ո՛չ մէկ ձկնուժ, ո՛չ մէկ շարժում՝ մարդու որ կարողութեան ալ վերաբերին ասանք՝ կրնայ իր նպատակին ծառայել, երբ առանց դիտակցութեան կ'գործէ: Մարդ պէտք է

գիտնայ, պէտք է հասկնայ ինքզինք ու ի՞նչ գործերը՝ Այս աշխարհի մէջ և մեր կեանքի բնախօսական պայմաններէն քիչ շատ բան կ'հասկնանք, և թերեւս հիմնական կերպով. գիտենք որ հասկացողութեան տկարացումը կամ թերութիւնները աղետաւոր ելք մը կ'ունենայ.— Վտանգը աւելի ծանր է հոգեկան աշխարհում։ Առանց գիտակցութեան ապրիլ հոգեխօսական կեանք մը՝ կ'մեռցնէ ներքին մարդը։ Զգացումը մեքենայի շարժում մ'է այդ մարդուն համար և սէրը՝ ցնորք։

Բնական օրէնքներու աղէտ մը միայն և միայն կ'առնուի երբ գիշերն իւր մութ թեւերուն տակ կ'սեղմէ երկիրը և լուսաւորներ անմիջապէս կ'գրաւեն երկինքը. նա միայն և միայն կ'առնէ՝ երբ առաւօտը վարդ ցնցուղներով կը նետուի միջոցին մէջ՝ վտարելու համար մութը։ Բայց նա՝ որ գիտէ ա՛յն օրէնքները, որք սքանչելի ներդաշնակութեամբ կ'վարեն գիշերն ու առաւօտը, չոտկար՝ կ'հրճուի, չապշիր՝ կ'իջնի։

Գիտութիւնն հաւատքի մէջ նոյն հրճուանքն ու նոյն դործը կ'ապտրաստէ անոր՝ որ կ'հաւատայ, մանաւանդ գիտէ թէ ի՞նչ է իր հաւատքը։ Տկար հոգի աւարածներ տկար են իրենց ամենէն խոշոր գործերուն մէջ ալ։ Հոգեկան տրամադրութիւններ մեծապէս կ'ազդեն մարդու նիւթական գործառնութեանց վրայ, այնպէս որ զուարթ հոգին և դործօն միտքը անխիստ լինելի բարեք են ատանց մէջ։

* * *

Քրիստոնէին համար բաւական չէ՝ հաւատալը։ Պօղոսի խօսքը միշտ պիտի ճշմարտուի ա՛յն քրիստոնեաներու վրայ, թէ «գնախանձ Աստուծոյ ունին, այլ ոչ գիտութեամբ»։ Առանց հասկցում-հաւատքի մարդ չյառաջգիմեր։ Երբ գիտունը իւր հեռադիտակը կ'ուղղէ դէպ ի վեր, կ'դիտէ լուսաւորներու շարժումը, օրէնք մը կ'գտնէ և կ'հետեւցնէ ուրիշ աշխարհներու և դրու-

թիւններու գոյութիւնը . այսպիսի ծանր աշխատանք-
գիտակցութեամբ յառաջ կրնայ տարուիլ . ի զուր չյոգ-
նեցնել գիտունն իւր ուղեղը . եղբ մը կայ, հաւատք
մ'ունի, բան մը գիտէ . Առանց գիտութեան հաւատք
չկայ և այս է Պօղոսի պահանջածը : Ասոր հաճար անոր
սիրտը կ'գործի և ասոր համար կ'աղօթէ :

Թո՛ղ քրիստոնեան ի զուր չտանջէ իւր հոգին . թո՛ղ
նա գիտնայ իւր հաւատքին եղբը . Քրիստոնեան իւր
հաւատքին գիտնականը պէտք է ըլլայ, անօգուտ է մի-
այն բարի նախանձ ունենալն :

Հաւատքը կ'թուլնայ երբ չենք ճանչեր , չենք գիտեր
զան պէտք եղածին պէս :—Գիտակից հաւատքը զօրա-
ւոր միտք և զուարթ հոգի կ'ենթադրէ :

* * *

Անգիտակից հաւատացեալներ կոյրերու կ'նմանին .
տարտամութիւնը, վարանքը կ'շրջապատէ զանոնք թան-
ձրը խաւարի մը մէջ . բարոյական անկումը, թշուառու-
թիւնը պատրաստ է անոնց ամեն քայլին : Այլանդակ
աշխարհ մ'է որ կ'ապրածուի անոնց առջեւ . միտքը
անստուգութեան մէջ կ'ծվայ և մարդու տենչանքը տան-
ջանք մը կ'ըլլայ իրեն համար . ամեն կողմ մթութիւն ,
ամեն կողմ անյուստութիւն :

Երանի՛ ա՛յն քրիստոնէին որ այն խարխալումի մէջ
կրնայ հոգեկան լոյսի գօնէ շող մը զգալ իւր մէջ և լսել
իւր գիտակցութեան ձայնը , ինչպէս Պօղոս զգաց և լսեց
Դամասկոսի ճամբուն վրայ . երանի՛ անոր՝ որ կրնայ
բարձրացնել իւր հաւատքը գեանաքարչ սողոսկումէն ,
ինչպէս Պօղոս սրացաւ , սրացաւ երբօրդ երկնքի մէջ,
լոյս ոլորտներու վրայ :

Եղբարք , սիրտս կ'գործի՛ երբ կ'տեսնեմ ձեր հա-
ւատքը , և կ'աղօթեմ առ Աստուած որ ձեր փրկութիւնը
այդ հաւատքէն բղխի ուղիւսօրէն : Կ'վկայեմ թէ նա-
խանձաւոր էք Տէր Յիսուսի համար , քրիստոնեայններ էք ,

քայց կ'իտափագիմ որ ձեր նախանձը, ձեր հաւատքը դի-
տութեամբ արտափայլի: — Կարդացէ՛ք և ուշադրու-
թեամբ կարդացէ՛ք Աւետարանը, հո՛ն կ'գտնէք հաւատք:
Կարդացէ՛ք և ուշադրութեամբ կարդացէ՛ք Պօղոսի թուղ-
թերը, հո՛ն կ'գտնէք հաւատքի գէղարկունք:

ԲՍԲԳԷՆ Վ.

ՕՐԻՆԱՅ ՊԱՀՊԱՆՆՈՒԹԻՒՆԸ

«ՈՐ ՊԱՀԷ ԶՕՐԷՆՍ՝ ԵՐԱՆՆԵԼԻ Է»

(ՍՈՒԱԿ. ԻԹ. 18)

Անուրանալի ճշմարտութիւն մ'է թէ մարդ ցորչալի աշ-
խարհի վրայ ապրի և չնչէ, իրեն իրր առաջնորդ և ուղեցոյց
պիտի ունենայ գերագոյն և բարձրագոյն օրէնք մը կամ կա-
նոն մը, որոյ պաշտօնն պիտի ըլլայ իշխել անոր կամքին վրայ:
Այդ օրէնքն որ անբռնարարելի, անփոփոխելի և անկերա-
կան է, բնականաբար ո՞ր և է փոփոխութեան մը կամ այլա-
կեր փոխեան մը չենթարկուիր, վասն զի անկիայ նոյն իսկ
մարդուն պարկեշտութեան և ուղղամտութեան բնածին սկզբ-
բունքն է:

Օրէնք մը ընդհանուր ճանչցուած ատենն, իւրաքանչիւր
ոք պարտաւոր է անոր հնազանդել, ի կիր առնելով այն ամեն
պատուէրներն, որոնք այդ օրէնքին էական և կենսական տար-
րերն կ'կազմեն: Իրաց այս վիճակին մէջ, բացառութիւն նե-
րելի չկրնար լինել, զի մարդ իւր բովանդակ կատարելութիւնն
օրէնքին կիրառութեան և գործադրութեան մէջ պիտի տեսնէ:
Հակառակ պարագայի մէջ, ով որ ինքզինքն ազատ կ'ուզէ ձե-
ւացնել, նա չարաչար կ'մեղանջէ իւր համոզումին և դիտակ-

ցութեանը հանդէպ : Այն բացարձակ և հարկաւոր ճշմարտութեան գոյութիւնը ուրացողն ու մերժողն , երբեք չկրնար հաշտուիլ իւր էութեանցը և բնութեանը հետ :

Մեր բանականութիւնն և նոյն իսկ բազմադարեան փորձառութիւնք ցոյց կուտան մեզ , թէ այդ գերբնական օրէնքն ինչպէս հին աշխարհի , նոյնպէս և նոր աշխարհի վրայ գործած է և կ'գործէ շատ մեծ ազդեցութիւններ , որոնք ըստ ինքեան համակ բարոյական են : Եւ թէ բարոյականի այդ գիտութիւնն ամեն ժամանակի մէջ գործնական գիտութիւն մ'է եղած , և մարդկային ընկերութիւնը շարունակ բարձր դիրքի մը և ազնուագոյն բարիքի մը գեղեցիկ բարեմասնութիւններով օժտած և զարգարած է : Մէկ խօսքով՝ նա տիեզերական բարիք և շնորհք պարգեւած է ամեն անոնց՝ որոնք իրենց պերճ և վսեմ կարողութիւններն օրինական չղջանակի մը մէջ՝ վայելչօրէն գործածելու եղանակն ու կերպն գիտցած են : Եւ իմաստունն անշուշտ այսպիսիներուն համար ըսած է , թէ «որ պահէ գօրէնս՝ երանելի է» :

Դժբաղդաբար սակայն օրէնքին այդ սքանչելի նկարագիրն և միանգամայն անոր բարերար և փրկարար ազդեցութիւնն ըստ մը նորասէրներ և ազատախօհներ անտեսելով և սքողելով , տարբեր դրութեանց և տեսութեանց հետեւելու անխօհեմութիւնն ունեցած են : Այդ ընդդիմախօսներուն դըլխաւոր առարկութիւնն այն էր թէ օրէնքին պահանջուններն կարի ծանր և անտանելի են , և թէ անոր ըստ ամենայնի հպատակիլն կ'հակառակի մեր բնականին և մեր իմացականութեանը՝ որ բարոյական վստանդներու կ'ենթարկուի :

Այս անտելի պատճառանքը և դիտողութիւնը ինքնին մեծ արժէք մը չ'կրնար ունենալ , երբ օրէնքը իւր ամբողջութեամբը ի նկատի առնուի : Այո՛ , օրէնքն բացարձակ հնազանդութիւն կ'պահանջէ , բայց այս պարագային մէջ ոչ իւրիք կ'իլնասէ մարդուն առանձնաշնորհեալ կարողութեանց . ո՞չ ապաքէն այդ բարձրագոյն օրէնքն է հիմն և բունն պարտքի և իրաւունքի գաղափարին , որ մեր մէջ մեծ դեր մը կ'կատարէ : Այդ պարտքի և իրաւունքի հանրածանօթ խնդիրն , օրէնքն միշտ հաւատարակչութեան և ներդաշնակութեան մէջ կ'պա-

հէ , մարդուն խոստանալով հաւասարապէս պարտք և իրաւունք :

Քաջ գիտե՞ք , թէ օրէնքն կ'հրամայէ և մարդ առանձնաշնորհութեան և բանականութեան կրկնակ կարողութիւններով օժտուած , պարտաւոր է անոր հնազանդիլ կատարելով այն ամենն՝ զորս օրէնքն կ'հրամայէ և խոյս տալով անոնցմէ՝ որոնք իրեն կ'արդելուին : Ահաւասիկ այս է պարտքին սահմանն : Բայց մարդ իւր պարտքերն կատարելու համար , ի հարկէ պիտի ունենայ միջոցներ և դիւրութիւններ , որոնք անհրաժեշտ են . ահա այս ալ իւր իրաւունքն է : Ուրեմն , օրէնքն մարդու մը չունեցածներն չպահանջեր , սուպ կ'պահանջէ այն ամեն՝ որոնք անոր անմիջական տրամադրութեանը ներքեւ կը գտնուին :

Օրէնքին այդ գաղտնիքներն խմբալի հարկաւ մեծ խմաստութիւն մ'է , « իմանալ զօրէնս՝ մտաց աւատոց է » (Առակ . Թ . 10) , մի միայն թեթեւամիտներն և անխորհուրդներն կը հակառակին այդ ճամբատութեան , որոնք սանձարձակ և անարգել կեանք մ'անցնել կ'երազեն : Ո՛չ , օրէնքն այդպիսիներն անպատիժ չ'թողուր , նա դառաջինն՝ իրբեւ դատաւարակ եւ ուսուցիչ մարդուն կ'սորվեցնէ իւր ունեցածներն գործածելու կերպն ու եղանակն , որպէս զի նա ո՛ր է և դժուարութեանց և խոչընդոտներու չ'բաղխի , և երբ անուշադիր ըլլայ իւր պատուէրներուն և հրահանգներուն , իրբեւ անաչառ դատաւոր կը պատժէ այնպիսին , մինչեւ որ զգաստանայ և ուղղութեան դայ : Այս անսութեամբ , օրէնքն ինչ որ բարի է , ինչ որ ճշմարիտ է և ինչ որ օգտակար է այն կ'պաշտպանէ . կ'հարուածէ և կ'սպառնայ ասոնցմէ տարբեր գոյն ունեցողներուն :

Ըսինք թէ իմաստունն օրինապահներն երջանիկ և երանելի կ'իյնէ , « որ պահէ զօրէնս՝ երանելի է » . և այդ երանութիւնն և երջանիկութիւնն մշտնջենապէս վայելելու իրբեւ միակ միջոց ի մէջ կ'ընտրուի մտքի և կամքի վրայ իշխելու և տիրելու պայմանն , ըստ այնմ , թէ « որ պահէ զօրէնս՝ իշխէ մտաց իւրոց » (իմաստութիւն Սիրաքայ ԻԱ . 12) :

Մտքի և կամքի վրայ իշխելն որչափ ալ դժուարին և ծանր կ'ընտրուի , սակայն առանց անոր կարելի չէ աշխարհի վրայ ապահով և անխռով ապրիլ : Որովհետեւ արտաքին չարեաց դէմ դնելու և միանգամայն նախախնամութեան մեղի չնորհած

մասնաւոր ձիրքերուն տէր ըլլալու համար, պէտք է որ մեր խորհուրդներն և իղձերն կառավարելու իմաստութիւնն ունենանք, ապաւինելով մեր կամքին անբռնարարելի սպաստանին մէջ: Ապաքէն, կան բաներ՝ որոնք ուղղակի մեզմէ կախումն ունին, և կան բաներ՝ որոնք չունին: Ինչ որ մեզմէ կախումն ունի, գլխաւորապէս մեր խորհուրդն է այն, ինչ որ չունի՝ է առողջութիւնն, հարստութիւնն և ամեն արտաքին իրերն: Մենք՝ միանգամ ընդ միշտ, եթէ մեր ուշադրութիւնն դարձնենք անոր վրայ՝ որ մեզմէ կախումն ունի, այն ատեն ո՛ր և է վնաս չհասնիր մեզ: Գիտենք, թէ անձնիշխանութիւնը մեր ամենապատուական ինչքն է, ոչ անոր համար որ զմեզ կ'ազատէ ամեն չարերէ՝ զորս կարծիքն՝ կ'յղանայ, այլ անոր համար՝ որ առանց բանականութեան բանի մը չձեռնարկեր:

Ինչ որ օրէնքն կ'պատուիրէ, և ինչ որ մարդուն սիրելի և պաշտելի է, Բարէն է այն, որուն հետեւանքն է երջանկութիւնն և անպահովութիւնն: Այն որ լաւ գիտէ բարիին ինչ լինելն, նա միայն կ'հասկնայ անտի յառաջ եկած շահն ու օգուտն: Բարեբաւորի և երջանիկ կեանքի մը հասնելու միակ միջոցն բարի և աւաքինի լինելն է, որ ինքնին զիտութիւն մ'է և և գերազանցապէս օգտակար: Ինչ որ բարի կ'կոչենք, մեր փառքն ու փարթամութիւնն է՝ այն, և ո՛չ թէ սին հաճոյք մը և բաղձանք մը: Բարին՝ որ բարոյական անհատ մը լինելու սկզբնադատճառն և նախաշաւիղն է, իւր սկզբունքն ո՛չ թէ իմացականութեան մէջ կուզէ տեսնել, այլ զգացումին մէջ, որ գործնական կեանքին բարձրագոյն սկզբունքն է: Ինչ որ զգացում է դատողութիւն կ'ըլլայ յետոյ:

Ուրեմն, օրէնքն կ'պահանջէ որ մարդ բարի լինի և բարոյապէս ապրի աշխարհի վրայ, և ո՛չ թէ չար լինի և անբարոյապէս ապրի: Եւ քանի որ ստուգուած է թէ մարդուն գործերն մե'րթ բարիին հակամէտ են և մե'րթ չարին, կամ թէ ըսենք՝ կան մարդիկ որոնք օրէնքին կ'համակերպին և հետեւապէս բարոյապէս կ'ապրին և կան մարդիկ՝ որոնք օրինազանց գտնուելով անբարոյական ուղղութեան մը կ'հետեւին: Օրէնքն ընդհանուր լինելով, հաւասարապէս այս երկու դասակարգի պատկանող անձանց վիճակն կ'որոշէ մեծ խարութեամբ մը: Բնական է որ՝ օրինապահներն և ճշդապահներն անխաբ՝ օրինադանցներն անպատիժ թողուն խղճի և զխտակ-

ցութեան հակառակ են : Առ այս , օրէնքն միջին եզր մը լինելով , արժանիքի և անարժանիքի տարբերութիւնն ի մէջ կ'ըբերէ , և ըստ այնմ ոմանց հատուցում և վարձատրութիւն կ'խոստանայ և ոմանց՝ պատիժ և պատուհաս : Այս անհակառակելի սկզբունքն , երբ մէկ կողմանէ օրէնքն իւր հաւասարակշռութեան մէջ կ'պահէ , միւս կողմանէ ալ աճումի և զարգացումի միտում և ձկտում ունեցողին խթան և մղիչ կ'լինի :

Այո՛ , օրէնքին հետեւանքն եզոյ հատուցումի գաղափարն բազմակողմանի գիւրութիւններ կ'հայթայթէ մարդուն : Դարձեալ , այդ հատուցումի գաղափարն է որ աշխարհի գործերն միօրինակութեան մէջ կ'պահէ՝ յար , և ո՞ր ամենէն կարեւորն է , հաւասարեալին անդրշխմեան կեանքի յուսուլից ապագայն կ'խոստանայ : Զի հատուցումն՝ երջանկութեան արժանիքն է : Վերջուր արժանիքն , ահա այն ասեմ թէ՛ մին և թէ՛ միւսն պարզապէս զգալի իրողութեան մը կ'վերածուին : Հոս՝ միւտ և գրկում , հոն՝ հաճոյք և բարեկեցութիւն , որոնք մարդուն սովորական բաղձանքի՝ աւարկայններն են :

Ինչպէս սոյն գերբնական օրէնքն , նոյնպէս և այն ամեն օրէնքներն , որոնք մեր բարեւաւութեան և բարօրութեան , և ընչից ապահովութեան համար խմբագրուած են , համահաւասար արժէք և զօրութիւն ունին : Այո՛ որ պարտաճանաչ և և ինքնաճանաչ է թող բոլորովին անձատուր լի ի օրինաց , այն համալմամբ , թէ Երանելի պիտի լինի ըստ խնայնոյն : Եւ այդ օրինասիրութեան պարտքերն նոյն իսկ աւտինին կենաց մէջ հարկ է որ ուսանի մանուկն , որպէս զի յետոյ ապա գիտարութիւն չզղայ կատարելու այն մեծամեծ պարտքերն , որոնք իւր վրայ պիտի դրուին զինքն պատուաւոր քաղաքացի ընելու համար : Ծնողք պէտք է որ այս կարեւոր կէտն ի սկառի առնուն և ըստ այսմ իրենց զաւակներն կըրթեն , շարունակ յեղյեղելով անոնց խմանտոյն սա նշանաւոր խօսքն , թէ «Որդեակ , պահեա զօրէնս հօր քոյ , և մի՛ մերժեր զխրատ մօր քոյ : Ընկալ դնոսա յանձին և ի գլուխ քո հանապաղ , և արկ իբրեւ զմանեակ ի պարանոց քո : Յորժամ զնապես՝ ընդ քեզ տարջիր , և ընդ քեզ եղիցի . յորժամ ննջիցես՝ պահեացէ զքեզ , և յորժամ յառնիցես՝ խօսակից իցէ քեզ : Զի ճրագ է պատուիրան օրինացն , լոյս և ճանապարհ՝ կենաց՝ յանդիմանութիւն և խրատ» : (Առակ . 2 . 20—24) :

ԽԱՐԵԱՎ . Վ .

ՍՐԲԱՎԱՅՐԻՆ ՊԱՏԿԱՌԱՆԻԸ



Հրէից կրօնական և ազգային միութեան կեդրոն մ'եղած էր իրենց երուսաղէմի Տաճարը , Եազվէի բնակարանը , ուր ամէն տարի խուռներամ կ'ըլիմէին բարեպաշտ ուխտաւորներ սաղմոսներ երգելով , մատուցանելու համար տօնական պատարագները :

Հրեայն և Հայն՝ պատմութեան մէջ վիճակակից եղած են , եթէ այժմ Հրեայն չունի իւր Տաճարը՝ Հայն ունի իւր Սրբավայրը՝ այսինքն Եկեղեցին , ուր Հրեայէն աւելի բուռն ձգտութեամբ կ'ըլիմէ . այդ եկեղեցին եղած է իր հոգեւորմիութեան կեդրոնը : Հոն կ'բերուի նա՝ իւր առաջին քրիստոնէական կնիքը ընդունելու , հոն հրեշտակային անմեղութեամբ՝ կ'ըլիմէ՝ իւր ծնողաց ձեռքէն բռնած՝ իւր առաջին ծնրադրութիւնը ընելու , հոն կուգայ՝ երբ ինքն ալ իւր կարգին ընտանեաց հայր լինելու կոչուած է . հոն կ'ուգայ՝ թափել իւր բուր ցաւերը՝ և մխլթարուած դուրս կ'ելնէ . հոն կ'թեթեւցնէ իւր խղճի բեռին ծանրութիւնը և սրբուած կ'մեկնի . հոն կուգայ ցամքեցնել իւր արցունքը՝ սիրելի կորուստներու համար՝ մեռելական տխրանոյշ երգերու տալաւորութեան տակ , իւր բազմապիսի գայթմանց մէջ՝ անոր գիրկը կ'առաջնորդեն զինքն արհաւիրք , երբ կ'ուզէ միայն Աստուծոյ ապաւինիլ :

Ահա թէ ինչո՞ւ համար՝ հայ ժողովուրդը՝ աշխարհի գուրանք յոյց կուտայ իւր եկեղեցիին վրայ և սկիզբէն ի վեր՝ նախանձախնդիր եղած է անոր պատկառանքը պահելու :

Հայ . եկեղեցական իշխանութիւնն ալ ամէն ջանք դրածած է անոր վայելչութիւնը խանգարող գեղծումները բառնալու , օգտուելով թէ՛ հին կտակի Տաճարին նկատմամբ եղած Ս . Գրոց պատուէրներէն և թէ՛ Առաքելոց՝ եկեղեցական ժողովներու և Հայրերու դրած կանոններէն :

* * *

Թէ մեր ազօթատեղիները ի՞նչ աստիճան սրբութեամբ և յարգութեամբ պահպանելու է , մի քիչ ողջմտութիւն բաւական է այդ մասին :

Հին Եկեղեցական Հայրերն՝ առ այդ կանխահոգութիւն ունենալով՝ կանոնադրոց մէջ զանազան կանոններ աւանդած են : Օրինակ .

— Եկեղեցին չտեմարան չ'ընել այլ և այլ ընդեզէններու , «իւղոյ և պանրի և ձիթոյ կամ այլ կերակրոյ» (Կանոնք Գ. Բարսեղի Կեսարացւոյ ձեռն. Գաւառական դիւղերու մէջ սովորութիւն է ընդհանուրի վերաբերեալ ընդեզէններ ևւն . եկեղեցեաց մէջ դիւղել . ներելի կ'լինի այդ՝ ստիպողական պարագայից մէջ՝ եթէ նոյն պէտքին համար գործածուի Եկեղեցւոյն դաւիթը , մանաւանդ ա՛յնպիսիները՝ որք մեծ դուռով մը բոլորովին անջատուած են բուն Տաճարէն՝ ինչպէս մեր բոլոր վանքերունը :

— Արդիւրած են հոն անվայել ժողովներ և հացկերոյթներ՝ ընելը , «բազմականաւ արկանել ի Տաճարին Աստուծոյ , ճաշ ուտել և խրախուսն առնել» (Կանոնք Լաւողիկեայ ժողովոյն (360 ԻԸ .) : Այս զեղծումը տեղ տեղ կ'տեսնուի՝ ա՛յժմ իսկ դժբախտաբար . մանաւանդ երբ կարգավար քահանային համար՝ իր ծուխերէն և կամ սուղի պատճառաւ՝ ճաշ կ'պատրաստուի և կ'զրկուի ժամատունը . քահանայն՝ կ'երեւի թէ միայն եկեղեցին յարմարագոյն կ'տեսնէ այդ ճաշին , շուրջը կ'ժողովէ իւր պաշտօնակիցներն , լուսարարն ու ժամակոչը , գինիին բաժակներն իրարու կ'ընդիման և կ'արձադանդեն . . . Եկեղեցւոյ յարկին տակ . . . — Ոսոք շունինք այն կրթական և այլ հանրօգուտ համախմբութիւններու մատին՝ որք երբեմն՝ թէպէտ Եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենան՝ պաշտամունքի ժամն դուրս , այլ սրբալիայրի պատկառանքը չ'են աւեր , երբ մանաւանդ ամենայն յարգանք՝ սեղանին վարագոյրը դոց կ'պահեն :

— Արդիւրած են հոն մեռեալ թաղել . միայն Տաճարէն քառասուն քայլ հեռաւորութեամբ ներելի նկատելով (Կանոնք Գ. Բարսեղի ձեռն. Կանոնք Ներսէս Բ. Կաթողիկոսի . Ի .) . — Վերջին դարերում սկսաւ մուսուլման քառասուն քայլի պատուէրը , և նախ Եկեղեցւոյ բակը՝ ապա ներքին դաւիթը լեցուեցաւ գերեզմաններով . այսքանը ողջմտութեան հակառակ չէ՝ , երբ մանաւանդ հանդուցեալը մեծ երախտաւոր մ'է Եկեղեցւոյ և հանդուր ազգին յոյժ սիրելի անձնաւորութիւն . այդպիսի թաղումներ ալ բացառութիւն նկատուած են և յատուկ բարձ-

րագոյն որոշումով մը վճռուած : — Բայց զեզծում մ'է գերեզմանները մինչեւ Տաճարին մէջտեղը տանկը :

Երբ այսքան յարգութիւն պահանջուած է Տաճարի ստորին մասին համար՝ որ հին կտակի «արդարեւ սրահ»ն է՝ ո՛րքան խիստ պիտի լինի հակողութիւնը Բեժիւն և Սեղանին համար ալ, որք հին կտակի «Սրբո-լիւն»ն ու «Սրբո-լիւն Սրբո-լիւն»ն են :

* * *

Արդէն առանց վերայնեալ կանոններուն՝ ինչպէս ըսի՝ փոքրիկ ողջմտութեամբ մը կրնանք ճանաչել հարկ եղածը, ուստի պէտք չ'իսկ պահանջական օրինակներ յառաջ բերել բեմի և սեղանի պատկառանքը պատուիրող :

Քանի մը զեզծումներ յիշենք .

— Միթէ օրինաւոր է դուրսի կօշիկներով ելնել այն տեղն՝ որ «սուրբ է» և ուր կ'դնուի «Մորենի անկիղելի» . դժբախտաբար այդ զեզծումը շատ կ'տեսնուի Կ. Պոլսոյ եկեղեցիներում (գաւառներու մէջ խիստ են այդ մասին) . Եկեղեցական պաշտօնեայնէր չ'են խղճեր իրենց փօթիկներով ելնել բեմ՝ և Ս. Պապարագին սպասարարի :

— Ըստ կանոնաց՝ Սարկաւադէ ստորին աստիճան ունեցողի մը՝ արդիւրած է բեմ ելնել . սակայն Սարկաւադի պահապանութեան պատճառաւ՝ քաղաքներու և գիւղերու մէջ ստիպուած ենք դպիրներն ալ սեղանի սպասարարութեան հանել (քոյց կրելու համար) . գէթ պարտաւոր ենք զգուշանալ որ դպրութեան չորս աստիճանները չ'ստացողներն՝ Ս. Պատարագի սպասարարութեան չ'մատչին :

— Սեղանի մասին խիստ զգուշաւոր են մերիները, այս զոյվելի է . բայց դժբաղդաբար պարզութեան դէմ կ'մեղանչեն մեր լուսարարք, մանաւանդ ճաշակի դէմ . ամենէն առաջ մեր զգացումներուն կ'դպչին կեղծ և շինծու վարդերն, արուեստական և ազեղ ծաղիկները, սրոնցմով մեր լուսարարները կը խճուրեն՝ անճաշակ դատարարութեամբ խաչերն, աւետարաններն, ևլն : Վայելուչ չ'է՞ր լիներ գէթ՝ որ այդ ծաղկամաններու մէջ՝ փոխանակ կեղծ վարդեր դնելը՝ եղանակին համեմատ բնական ծաղիկներ և վարդեր գետեզուէին . բայց ամենէն սիրունն ու սիրելին՝ պարզութիւնն է . խաչ մը կեդրո-

նը դրուած (այդ միտյն է անհրաժեշտ) , մի քանի աւետարան և մի քանի աշտանակ երկու կողմերը համաշարիօրէն շարուած , (առաւել կամ նուազ թուով՝ ըստ կարողութեան կամ ըստ հանդիսութեան) , բաւական են Ս . Սեղանը ներկայացընելու :

—Աւելորդ է յիշել՝ թէ այս կարգին մէջ կ'մտնեն անարաւար պատկերներու շարքը՝ եկեղեցւոյ վրայ կարեւոր կամ բարեպաշտիկ վարդ մ'աւելցնելու ջանքով : — Կ'յուսանք թէ ժողովրդեան մտաց լուսաւորութիւնը և ողջմտութեան ու ճշակի վարդապետութիւնը՝ հետզհետէ պիտի բառնան այսպիսի անընչաճ և սուղ վարդեր և սովորութիւններ : Մեր եկեղեցին բնութեան և արուեստի գեղեցկութեանց վարդաբանքը բացարձակապէս չ'մերժեր , այլ կ'ընդունի վայն չափաւոր և ճշակաւոր սահմանի մէջ . այսպէս , մեր հին եկեղեցիք ունին պատերու վրայ այլ և այլ նկարներ իրեն վարդ , թէպէտ և ո՛չ պաշտամանց համար :

Եկեղեցւոյն երկնաւոր հիմնադիրը՝ զայն ժողովրդեան հոգեկան պէտքին համար հաստատեց և ժողովուրդն յանձնած է իւր ամենասիրելի սրբավայրին հսկողութիւնը՝ եկեղեցական պաշտօնէութեան : Հին ատեն եկեղեցւոյ նոյն իսկ նիւթական պատկառանքին և կարգին պահպանութիւնը՝ աւանաւոր և մեծ անձնաւորութեանց կը յանձնուէր , Ղազար Փարպեցիներ՝ Կոմիտաս Կոթողիկոսներ՝ Ժամանակին՝ եկեղեցեաց լուսարարներ կամ հին բառով՝ «փռակալ»ներ էին . այժմ ալ Ս . Էջմիածնի և Ս . Երուսաղէմի պէս մեծ վանքերու մէջ՝ կարեւոր եկեղեցականաց յանձնուած է այդ պաշտօնը (ընդարձակ արտօնութիւններով) . իսկ մենք զայն ամենէն հասարակ և սովորական անհատներու յանձնել չ'ենք խղճեր :

Արդ , ինչպէս թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական եկեղեցւոյ պաշտօնէութիւնը պարտաւոր է յարմարիլ ժողովրդեան ազնիւ ճաշակին և հոգեւոր ու մտաւորական արամադրութեանցը , նոյնպէս հայ հաւատացեալ ժողովուրդը իրաւունք ունի համար պահանջելու անոնցմէ՝ եղած գեղձմանց մասին , և պարտաւորելու դանոնք՝ բարեվարդ և բարեկարգ ընելու և պահելու իրենց այդ հոգեհատոր և մխիթարիչ հաստատութիւնը :

ՄԱՇԹՈՅ Վ .

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն անցեալ ուրբաթ օրը Սկիւտար երթալով կիրակի առտու ներկայ գտնուեցաւ Ս. Կարապետի եկեղեցին և երէկ Պատրիարքարան իջաւ :

Երուսաղիմայ Պատրիարքական վոխանորդ հանգուցեալ Սիմէոն արքեպիսկոպոսի համար ըսուեցաւ որ 30,000 ոսկի կամ աւելի հարստութիւն թողած է. սակայն կըսուի թէ վախճանեալ Սրբազանն միայն իւր անձին յատուկ հարստութիւն թողած է 175 հատ երկաթուղեաց պարտատու և 140 անգլիական ոսկի, զոր ապահովագրական ընկերութիւնը պիտի վճարէ, որովհետեւ Տ. Սիմէոն Սրբազան ապահովագրել տուեր է իւր կեանքն, և 10 տարի ետքը ընկերութեան հետ հաշիւ տեսնելով և իմանալով որ ընկերութեան քով 240 ոսկի ունի, 100 ն ինքն առեր, և մնացեալ մասին համար պաշտանագրեր է որ իւր մահուանէն ետքը Երուսաղիմայ վանքին տրուի :

Արարապի վերջին թիւէն կը քապենք հետեւեալ լուրերն ու Սինոդական որոշումները.

Ամենայն Հայոց Հայրապետը Երեւանի թեմակալի վոխանորդ նշանակեց Գեր. Ներսէս եպիսկ. Խլադավէրդեանին, որ Մայիսի 12 ին մեծ բաղմութեան ուղեհրով Երեւան գնաց և ժողովրդի կողմից համակրութեամբ ընդունուեցաւ :

— Գեր. Գրիգոր եպիսկ. Աղաւիրեանը կրկին ուղեւորուեցաւ իւր վանքը, Ագուլեանց Ս. Թովմայ Առաքելոյ մենաստանը :

— Ս. Պետրբուրգի Հայոց եկեղեցւոյն միաբան Տ. Գրիգոր քահանայի Գրիգորեան շնորհեցաւ իրաւունս կրեղլանջախաչ քահանայական :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՄԻԱ. — Ռուսական փոխառութիւնը քիչ քիչ հաստատութիւն կը գտնէ : Փարիզէ կը ծանուցուի թէ ռուս ելծական պատուիրակները կը շարունակեն բանակցութիւններն, և թէ ելծական նախարար Պ. աը Վիգդէ միջանի օր եւս Փարիզ պիտի մնայ :

— Զարն ու Զարուհին օգոստոս 26 ին վիէննա պիտի երթան :

ՍՊԱՆԻԱ կարգադրութիւններ ըրաւ երկու զրահաւոր գնելու համար Իտալիայէն, երկուք ալ Անգլիայէն և Գերմանիայէն, նաեւ 10,000 Մաւղերեան հրացան, յորմէ կարեւոր պաշար մը արդէն զրկած է Բուպա :

ԳԵՐՄԱՆ կառավարութիւնն որոշեց Միջերկրականի մէջ հաստատել նաւախումբ մը բաղկացեալ երկու առաջնակարգ զրահաւորէ և մէկ չրջուն մարտանաւէ :

— Գերմանիոյ կայսրը Բէշթա պիտի երթայ հազարամեակի յուլահանդէօը տեսնելու համար :

— Իշխան Հօէնլօէ վարչապետն իշլ ժամանեց նախընթաց օր, և երեք քառորդ ժամու խորհրդակցութիւն մ'ունեցաւ Ֆրանձ Եոզէֆ կայսեր հետ : Յետոյ Ն. Վեհափառութեան հետ ճաշեց, և նոյն երեկոյին Աւստրիա ամառնային բնակարանը դնաց :

ՃՍԲՈՆԻ նախորդ ոստանէն՝ Ետոյէ կը հեռագրուի թէ երկրաշարժի նոր ցնցում մը երեք հազար տուն հողի հետ հաւասարեցուց : Շատեր փրատակաց ներքեւ մնալով կորան :

Թարգմանութիւնք Կ. Ս. Իւթիւնեանի

ԶԵՂԶԵԱԼ ԳԻՆԵՐ

	Հատոր	Ղուգ
Թափառական Հրեայ (Էօթէն Սիւ)	4	50
Ընտանեզուրկ (Էքթօր Մալոյ)	2	12
Կարմիր Մարդոց Երդումը (Բօնսօն տիւ Թէրայլ)	2	10
Կրանթ Նաւապետին որդիքը (Ժիւլ Վէրն)	3	15
Հինգ շաքամօ օղապարիկով »	2	12
Ամուսնութիւնք Փարիզի (Էտմոն Ապու)	1	5
Զիկազակ (Ֆօրմիւնէ տը Պուակօպէ)	1	5
Տիկիլին Վիլֆէրոն որդի (Լէոն տը Թէնսոյ)	1	5
Ակզբունք քաղաքական տնտեսութեան (ժօ- զէֆ Կառնիէ)	1	3
Պատժ. Օրինագիրք Օսմ. Պետութեան	1	2
Սրկածք Միւնխիաւզէն Պարոնի	1	2

Կեդրոնատեղին է ՊԱՂՏԱՏՆԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ ԿՈՒԼ-
Թան Համամ Թիւ 14:

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ՏՈՒԹ. Գ. ԱՐԱՊԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ հինգ-շաքմի օրերն կա-
տարած ձրի խորհրդակցութիւնները, յետայսորիկ, տեղի
պիտի ունենան ժամը 5 էն մինչեւ 11 ըստ Թրքաց:

Շ Ա Ն Թ Ա Ր Գ Ե Լ

Ե Լ Ե Կ Տ Ր Ա Կ Ա Ն Զ Ա Ն Գ Ա Կ

ԵՒ ՈՒՐԻՇ ԱՄԵՆ ՏՆՍԱԿ ԵԼԵԿՏՐՈԿԱՆ ԳՈՐԾԻՐ

Ա Ն Օ Ր Ի Ն Ա Կ Ա Ժ Ա Ն

ԸՆՏԻՐ ԱՊՐԱՆՔ, ԽՆԱՄԵԱԼ ԱԶԽԱՏՈՒԹԻՒՆ

1890ԻՆ ՀԻՄՆՈՒԱԾ ՏՈՒՆ

Ս. Վ. ԱՃԷՄԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ՅԱՆԶՆՍՈՒԻ—ԵԼԵԿՏՐԱԳԷՏԻ. ՀԱՅԹԱՅԹԻԶՔ ՊԵՏՈՒԹԵԱՆ

14 ԵԼ 19, ԶԻՎԵՐ ՊԵՂ ԽԱՆ, 14 ԵԼ 19

ՔԻՆԵՔՏԻԼԵՐ — ԿԱԼԱՄԱ

Տ Ո Ք Թ. Շ Ի Ր Ի Ն Ե Ա Ն

ԲԺԻՇԿ, ՎԻՐԱԲՈՅԺ ԵՒ ՄԱՆԿԱԲԱՐԶ

Վ. Կայեալ ֆիլատելիոյ եւ Նիւ Եորքի համալսարաններէն, երեք տարի հիւանդանոցաց մէջ ծառայած, յետ տասն եւ հինգ ամեայ փորձառութեան, իւր բնակութիւնը հաստատած է Բերա, Սագըզ Աղան փողոց Թիւ 47 տունը, ուր կ'ընդունի հիւանդ ամէն օր ժամը 7-11. երեքշաբթի եւ ուրբաթ օրերը ձրի կը դարմանէ իրեն դիմողները, իսկ շաբաթ օրերը ժամը 7 էն մինչեւ 9ը կը զանուի Պօլիս Բիւլ-լիքեան եղբարց դեղարանը: Կը դարմանէ ամեն հիւանդութիւնը, մասնաւորապէս սրտի եւ կուրծքի եւ կը կատարէ ժամէն կարգի վիրահատական գործողութիւնք:

Ա Ր Տ Օ Ն Ա Տ Է Ր

Կ. Ս. Ի Ի Թ Ի Ի Ճ Ե Ա Ն